



Հունիս 1992

ՀԱՅԲ Հաստատությունը սույն տեղեկագրի միջոցով հրատարակում է իր գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների արդյունքներն ու իր տարբեր հանձնախմբերի ուսումնասիրությունների եւ տեսակետների քննարկման եզրակացությունները: Տեղեկագրում տեղ եւն գտնում նաեւ ՀԱՅԲ Հաստատության հետ գործակցող գիտահետազոտական հաստատությունների ու անհատ մասնագետների աշխատություններ:

ՀԱՅԲ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԲ Հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատեւման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրա՝ տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունները առաջարկելու մեջ:

ՀԱՅԲ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ եւ համահայկական չափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես զերծ է որեւէ հատվածական շահագրգռվածությունից եւ կամ ազդեցությունից:

ՀԱՅԲ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝

ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար՝ գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը՝ տարբեր մակարդակներով եւ ձեւերով:

ՀԱՅԲ Հաստատությունը հիմնադրված է եւ ղեկավարվում է, եւ կամ աջակցություն է գտնում հայության ճակատագրով մտահոգ եւ կյանքի այլազան բնագավառներում եական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից:

ՀԱՅԲ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅԲ Հաստատությունը ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՅԻ ՀԱՐՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտնի է, որ որեւէ կազմակերպության, հավաքականության կամ ազգի գոյությունն ու առավել եւս զարգացումն ու բարգավաճումը մեծ չափով կախված է նրա կառավարման վիճակից: Որեւէ հասարակական համակարգի համար առաջնային նշանակություն ունի նախ՝ իր կառավարման կառույցի համապատասխան լինելը գոյություն ունեցող դրությանը, պահանջներին ու խնդիրներին. երկրորդ՝ այդ կառույցի անխափան ու արդյունավետ գործողության ապահովումը բոլոր պայմաններում:

Ամենակատարյալ կառույցներն իսկ ժամանակի ընթացքում պայմանների, պահանջների, հետեւապես եւ խնդիրների փոփոխության պատճառով վերատեսության կարիք են զգում, եւ ժամանակին կատարված վերատեսությունն ու ըստ հարկի փոփոխությունները շատ անգամ բախտորոշ նշանակություն են ունենում տվյալ համակարգի համար:

Հայությանը այս տեսակետից մոտենալու եւ հայ ազգը իր բոլոր հատվածներով որպես մի հասարակական համակարգ դիտելու դեպքում ի հայտ է գալիս, որ հայությունը, դարերի ընթացքում զրկված լինելով իր ինքնիշխանությունից՝ տրոհված մի քանի տիրապետությունների միջեւ, եւ աշխարհով մեկ ցրված լինելով, չի ունեցել քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ բնագավառների ամբողջական կառավարման համազգային կառույց: Ինչ վերաբերում է Հայ Լուսավորչական եկեղեցու համազգային կառույցին, ապա այն հայ իրականության մեջ հոգետր-կրոնական ոլորտից այն կողմ, թեկուզ գործել է կրթական, մշակութային եւ մասամբ էլ այլ բնագավառներում, սակայն ունեցել է սահմանափակ իրավասություններ ու հնարավորություններ՝ միշտ կրելով օտար տիրապետությունների

ճնշումը իր բոլոր հետեւանքներով:

Համահայկական առումով հայ ազգային արդի կառավարումը հիմնականում շարունակում է կրել անցյալից եկող հետեւյալ հատկանիշները՝

ա) հայ ազգը, որպես համակարգ, այժմ էլ չունի համազգային եւ կյանքի բոլոր բնագավառներն ընդգրկող կառավարման կառույց:

բ) արտաքին (կամ արեւմտյան) Սփյուռքի տեղական կառավարման հայ ազգային կառույցների գոյություն ունեցող կազմակերպական դրվածքը հիմնականում նախագծվել ու գործարկվել է 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին, եւ, ըստ ամենայնի, այն մեծ մասամբ չի համապատասխանում հայության ներկա եւ տեսանելի ապագայի պայմաններին, պահանջներին եւ խնդիրներին:

գ) ներքին (կամ արեւելյան) Սփյուռքը, ընդհանրապես զրկված լինելով հայ ազգային կառավարման որեւէ կառույցից, միայն վերջերս է հնարավորություն ստացել ձգտելու փոփոխություն մտցնել իր այդ վիճակի մեջ:

Բոլոր դեպքերում, ինչպիսին էլ լինեն համահայկական եւ տեղական կառավարման կառույցների գոյության, կամ դրանց կատարելության ու արդյունավետության վերաբերյալ նախնական դիտարկումների եզրակացությունները, այժմյան բարդ եւ դեռ բարդացող պայմաններում հայության ամբողջական, կամ որեւէ հատվածի անվտանգության ու կենսական շահերի պաշտպանման, ինչպես նաեւ նրա հետագա զարգացման ու բարգավաճման նպատակով իր մարդկային, նյութական, դիրքային եւ այլ հնարավորությունները եւ ներուժը արդյունավետորեն օգտագործելու համար, ըստ երեւույթին, բացարձակապես անհրաժեշտ է, որ հայության կառավարման դրությունը, որպես կարետրագույն խնդիր, գիտական վերատեսության ենթարկվի, ուսումնասիրվի եւ հարկ եղած դեպքում փոփոխություններ կամ նոր կառույցների ստեղծման նախագը-

ծեր առաջարկվեն հայության համապատասխան մարմիններին, շրջանակներին:

Նշված կառույցների կատարելության ու արդյունավետության համար որպես չափանիշ, հավանաբար, հարկ է սահմանել հետևյալը.

1. Կառույցի կատարելությունը չափվում է նրա ձկունությամբ, տոկունությամբ եւ բոլոր պայմաններում անխափան գործելու կարողությամբ:

2. Կառույցի արդյունավետությունը չափվում է նրա՝ ազգի բոլոր հատվածների բոլոր տեսակի հնարավորությունները, կարողություններն ու ներուժը ամբողջ ազգի կամ վերջինիս որեւէ հատվածի կենսական կարիքների բավարարման կամ պաշտպանության վրա հիմնովին ու արագ կենտրոնացնելու եւ արդյունավետորեն օգտագործելու ունակությամբ:

* * *

Ազգային տեղական եւ համահայկական կառավարման իրավիճակի վերանայման եւ հարկ եղած փոփոխությունների կամ նոր կառույցների ստեղծման կարետրագույն խնդիրներից են՝

ա) ցրված հայության ազգային պատկանելության, քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների կարգավիճակի սահմանումը.

բ) այդ կարգավիճակը հայության տարբեր հատվածների կողմից ընդունելի դարձնելու եւ գործարկելու հնարավորությունների, պայմանների, միջոցների ու փուլերի նախատեսումը, հաշվարկումն ու ծրագրումը.

գ) հայկական ազգային քաղաքացիության իրավական եւ գործնական համատեղելիությունը այլ երկրներում բնակվելու կամ քաղաքացի լինելու կարգավիճակի հետ:

Այս ըմբռնումով ՀԱՅՔ հաստատությունը կազմել է իր թիվ 2 ծրագիրը, որը սերտորեն առնչվում է թիվ 1 ծրագրի հետ: Թիվ 2 ծրագրի արագ ու արդյունավետ իրագործման համար ՀԱՅՔԸ գիտահետազոտական ծրագրային աշխատանքների

կատարմանը զուգահեռ կառավարման հարցերի իր հանձնախմբի միջոցով կազմակերպում է նաեւ գիտախորհրդակցական սեմինարներ, որոնց արդյունքները պարբերաբար տպագրվելու են սույն տեղեկագրում: Եթե վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ մեր ընթերցողներն ունեն ուսումնասիրություններ, դիտարկումներ եւ կամ որոշակիորեն հիմնավորված տեսակետներ, կարող են դրանք ուղարկել տեղեկագրի հասցեով:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

ԹԻՎ 2

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՋՊԱՅԻՆ ԵՎ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԳԻԾ

Հայ ազգի ցրվածության ու անկառավարելիության պայմանները ակնհայտորեն բացասական ներգործություն են ունենում բազմաթիվ կենսական խնդիրները լուծելու եւ հատկապես ազգի հնարավորությունները, միջոցներն ու ներուժն իր իսկ անվտանգության, գոյապահպանման ու զարգացման համար լիարժեք ու արդյունավետ օգտագործելու տեսակետից:

Հայոց ազգային կառավարման համակարգի ընդհանուր խնդիրը եւ հատկապես այդ համակարգի արդյունավետության աստիճանը, ըստ երեսյոթին, հարկ եղած գործնական ուշադրության չի արժանացել, թեւ վաղուց ի վեր այն բացարձակապես չի համապատասխանում ո՛չ ազգի փոփոխված պայմաններին՝ ու կարելիություններին, ո՛չ էլ նրա կենսական պահանջներին:

Ելնելով այս իրականությունից, ՀԱՅՔ հաստատությունը, հիմք ընդունելով համայն հայության կառավարման համակարգի ու կառույցների վերատեսության եւ բարեփոխության անհրաժեշտությունը, կազմել է իր թիվ 2 ծրագիրը հետևյալ

սկզբունքների համաձայն:

Հայ ազգային կառավարման համակարգն ու կառույցը պետք է՝
ա) ներառնի ամբողջ հայությունը.

բ) օժտված լինի տեղական լրիվ ինքնավարությամբ եւ միաժամանակ ապահովի քաղաքացիություն համահայկական իրավական կամ բարոյական հիմքի վրա՝ որոշակիորեն արտահայտված հայ քաղաքացու իրավունքների եւ պարտականությունների դրույթներով.

գ) կազմված լինի եւ գործի ամենաժողովրդավարական հիմունքներով՝ ապահովելու համար անհատի, ազգային փոքրամասնությունների եւ քաղաքական, հասարակական, տնտեսական, կրոնական ու այլ խմբակցությունների եւ կազմակերպությունների մարդկային բոլոր իրավունքները.

դ) բոլոր վայրերում, ելնելով պայմաններից, յուրաքանչյուր հայի համար հնարավորություն ստեղծի մասնակցելու ազգային կյանքի ամենաբնորոշ գործընթացներին.

ե) հայության որեւէ հատվածի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատ հայի գերծ պահի ազգային քաղաքացիական կարգավիճակից բխող որեւէ տեսակի հալածանքից:

զ) շահագրգռի ամեն մի հայի եւ հայկական ամեն մի հատվածի առավելագույն չափով մասնակցելու ազգային կյանքին՝ քաղաքացիական իրավունքներով, պարտականություններով եւ հարազատ ու գործնական մասնիկը դառնալու ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ:

Հայության կառավարման համակարգի եւ կառույցի վերջնական նախագիծը ենթադրվում է կազմել մասնագիտական անհրաժեշտ ուսումնասիրություններից, հաշվարկներից եւ խորհրդակցություններից հետո:

Այնուհետեւ, հայության տարբեր հատվածներում համազգային քննարկումների ու համաձայնեցման համար ենթադրվում է ստեղծել մի հատուկ հանձնախումբ, որի մասին հարկ է անդրադառնալ առանձին:

ԷԹՆՈՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՆ ՈՒ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գոյատեւման գաղափարը այսօր չէ, որ դարձել է հայերի ապրելակերպի հիմնադրույթը:

Հասկանալով նման երեւոյթի հիմքում ընկած օբյեկտիվ պատճառները, այնուհանդերձ, չենք կարող չահագանգել. սա չափազանց վտանգավոր, անգամ կործանարար միտում է. «վերջին խրամատի» սինդրոմով տառապող ազգը չունի ապագա: Գոյատեւումը ընդամենը սկզբնակետն է այն երկար ճանապարհի, որը պետք է բերի բարգավաճման, քանզի բարգավաճումն է յուրաքանչյուր ազգի գերնպատակը: Նույնիսկ եթե մենք, ունենալով հսկայական պատմական փորձ եւ դրական լիցք տալու ընդունակ մշակութային պաշար, ընդունենք, որ այսօր, հանգամանքների բերումով, առայժմ կանգնած ենք այդ սկզբնակետին, միեւնոյն է, չենք կարող ճամփա ընկնել՝ սոսկ գոյատեւումը ունենալով որպես միակ նպատակ:

Գոյատեւման ու բարգավաճման միջեւ, ինչպես արդեն ասացինք, ընկած է մի երկար ճանապարհ, որը բազմաթիվ կանգառներ ունի, այն է՝ անվտանգություն, ազատություն, պետականություն, ժողովրդավարություն եւ այլն:

Ազգի գոյատեւման անհրաժեշտ նախապայմանը նրա անվտանգությունն է:

Անվտանգությունը (կամ գոնե հանուն այդ անվտանգության պայքարելու նպատրաստականությունը) ենթադրում է էթնոսի կազմակերպվածության որոշակի մակարդակ, որոշակի կառուցվածքներ, որոնց միջոցով էթնոսը ինքնակազմավորվում է: Այստեղ, բնականաբար, հարց է ծագում. ո՞րն է այն որակը, որ նպաստում է էթնոսի ինքնակազմակերպմանը, այսինքն՝

ինչի՞ց է սկիզբ առնում ազգային ինքնագիտակցությունը: Այս հարցին պատասխանելու համար նախ, փորձենք հասկանալ, թե ո՞րն է այն նվազագույն հատկանիշը, որ անձը դարձնում է ազգի բաղադրյալ, ի՞նչն է, որ իրավունք է տալիս նրան խոսելու իր՝ այս կամ այն ազգին պատկանելու մասին: Հավանաբար, սա հասկանալի է արդեն ինքնագիտակցության առկայության մակարդակում, երբ անձն իրեն որոշակի էթնոսի անդամ է համարում, այսինքն՝ երբ գիտակցում է իր պատկանելությունը որոշակի մշակութային տիպի: Որպես օրինակ բերենք հրեաներին, որոնք, չունենալով պետականություն, որոշ դեպքերում չպահպանելով կրոնական պատկանելությունը, լեզուն, սովորույթները, այնուհանդերձ, շարունակում էին իրենց հրեա համարել, հիմնվելով միայն իրենց ազգային ինքնագիտակցության վրա եւ պահպանելով իրենց հիշողությունը որպես հրեական մշակույթի ժառանգորդների հիշողություն: Նույնը կարելի է ասել բոլոր այն ժողովուրդների մասին, որոնք, պատմական տարբեր հանգամանքների բերումով, հայտնվել են իրենց հայրենիքից դուրս եւ որոնց պատմական հայրենիքը որպես պետականություն չի պահպանվել: Սա կարելի է անվանել **ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ:** Այս մակարդակում կարող է ձեւավորվել համայնքի կառուցվածքը, որը սկզբնական շրջանում դրսևորվում է միայն ակումբատիպ կառույցների ձեւով: Վերջիններս հնարավորություն են տալիս համայնքի անդամներին միասնաբար պահպանելու եւ շտկելու իրենց ազգային նկարագիրը:

ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԸ ենթադրում է լեզվի պահպանման գիտակցության անհրաժեշտությունը: Հրեաների, այսորների եւ նախորդ տիպի մյուս ազգերի համար մայրենի լեզվին տիրապետելը խիստ անհրաժեշտություն չէ: Պատմական հայրենիքի սահմաններից դուրս՝ ուրիշ երկրների տարածքում գտնվող համայնքները իրենց ներքին, ներհամայնքային կյանքում նույնպես հաղոր-

դակցվում են այդ երկրի լեզվով: Մայրենի լեզվի իմացությունը հարգանք է ներշնչում, ողջունելի է, սակայն համայնքի մեջ ընգրկվելու համար անհրաժեշտ պայման չէ: Մինչդեռ էթնիկական անվտանգության երկրորդ մակարդակում մայրենի լեզուն չիմանալը դատապարտվում է եւ գրեթե անանցանելի արգելք է դառնում համայնքի կազմում ընգրկվելու համար: Որպես օրինակ կարող են ծառայել հայկական, գերմանական, լեհական, ուկրաինական, չինական եւ այլ համայնքները (ասենք, որ խոսքը վերաբերում է սփյուռքին, այլ ոչ վտարանդությանը): Միեւնույն ժամանակ արժե նշել, մեր կարծիքով, բավականաչափ հետաքրքիր մի տարբերություն, որն այս առումով առկա է ներքին եւ արտաքին հայ սփյուռքի միջեւ: Ամենայն հավանականությամբ, ներքին սփյուռքում պատմական հայրենիքի հիշողությունը շատ ավելի թույլ ձեւով է արտահայտված, նրա անվտանգության մակարդակը ավելի ցածր է եւ, ըստ երեւոյթին, գտնվում է առաջին եւ երկրորդ մակարդակների միջեւ:

Էթնոսի անվտանգության երկրորդ մակարդակում վերոհիշյալ կառուցվածքը համալրվում է ազգային դպրոցով, որի նպատակն է պահպանել համայնքը եւ վերարտադրել այն նույն հիմքի վրա:

Կրոնական պատկանելությունը շատ ավելի բարդ հարց է, քանի որ կրոնական, գաղափարական, քաղաքական եւ սոցիալական բազմակարծության շրջանում, երբ երկրագնդի մեկ վեցերորդից շատ ավելի ընդարձակ տարածքում սկսել է տիրել անհավատությունը, իր ազդեցությունը թողնելով ամբողջ աշխարհի վրա, դրեւէ կրոնական համայնքին պատկանելու հարցը, որը նախկինում հիմնականն ու որոշիչն է եղել, այժմ զգալիորեն կորցրել է իր սրությունը: Այդ մասին է վկայում էթնիկական համայնքների մեջ տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչների ընդգրկվածությունը: Այնուհանդերձ, կրոնական գործոնը դեռեւս պահպանում է իր կարեւոր

նշանակությունը. ավելին՝ հենց նրանով է բնորոշվում ԷԹՆԻ-ԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԸ: Ինչպես գիտենք, որոշ դեպքերում կաթոլիկ հայերը, կամ լեհ բողոքականները, կամ այլ կրոնական ուղղություններից ու աղանդներին պատկանող մարդիկ զրկված են լինում իրենց էթնիկական համայնքների կազմում ընդգրկվելու հնարավորությունից: Այստեղից էլ բխում է առանձին ազգային-կրոնական համայնքների ստեղծման անհրաժեշտությունը:

Այսպիսով, էթնիկական անվտանգության երրորդ մակարդակում համայնքի կառուցվածքային երկու (ազգային եւ լեզվական) հատկանիշին ավելանում է երրորդը՝ կրոնականը:

Գրավոր հաղորդակցման, ինֆորմացիայի գրավոր հաղորդման, մշակման եւ պահպանման եղանակի կիրառումը չափազանց մեծ նշանակություն ունի որոշակի մշակութային ինքնավարության հասնելու համար. այն ընդլայնում է համայնքի՝ նույն հիմքի վրա ինքն իրեն վերականգնելու, վերարտադրելու հնարավորությունները, եւ այդ պատճառով կարող է գնահատվել որպես ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ:

Այս մակարդակը ենթադրում է կառուցվածքային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ մամուլը, գրադատարակչությունը, ազգային լեզվով խաղացանկ ունեցող թատերախմբերի, ռադիո եւ հեռուստահաղորդումների առկայությունը եւ այլն:

Եթե ծտար պետության տարածքում այս ամենին գումարվում է նաեւ որոշակի քաղաքական գործունեություն, որը իրականացվում է որոշակի՝ օրինականորեն հաստատված քաղաքական կառուցվածքի միջոցով, ապա դրանով իսկ ստեղծվում է ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՆԱԳԵՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԸ:

Կառուցվածքային առումով այս մակարդակին են համապատասխանում քաղաքական կուսակցությունների՝ եւ հասարակական կազմակերպությունների առկայությունը, ինքնավարությունը,

կիսաանկախ պետականությունը:

Այս մակարդակում ի հայտ են գալիս այնպիսի կառուցվածքներ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում անցումը «համայնք» համակարգից «ազգ» համակարգի: Համայնքի ներսում սոցիալական շերտավորումը, դասակարգերի, սոցիալական տարբեր խմբերի առկայությունը նշանակալի չէ, իշխանություններն այստեղ դեր չեն խաղում (կամ նրանց դերը լիարժեք չէ), քանի որ համայնքը չունի կարետոր մի հատկանիշ՝ պետականորեն կազմակերպված տնտեսական համակարգ, որի հիման վրա միայն կարող է ստեղծվել հասարակությունը: Մինչդեռ, անգամ թերի պետականության կամ սահմանափակ ինքնավարության պայմաններում կարող է կազմավորվել այն հասարակությունը, որը հող կստեղծի ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ծագման համար:

Այսպիսով, պետականությունն է, որ նշանավորում է ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ (եւ վերջին) ՄԱԿԱՐԴԱԿԸ: Լիարժեք պետականության առկայության դեպքում, երբ էթնոսի անվտանգությունը ապահովվում է պետական կառուցվածքների միջոցով, առաջ է քաշվում մի նոր խնդիր, որի լուծումը միայն կարող է հասցնել ազգը իր գերնպատակին: Դա մարդու իրավունքների պաշտպանության խնդիրն է:

Հայ ժողովրդի՝ օտար, հաճախ թշնամական շրջապատին հարմարվելու փորձը նրան հնարավորություն տվեց դիմակայել խորհրդային գաղափարախոսությանը, պահպանելով էթնիկական անվտանգության բոլոր նախապետական մակարդակների կառուցվածքային առանձնահատկությունները, պահպանելով ազգային միասնականությունը, ազգային անկախ պետականության ստեղծման գաղափարը: Սակայն, որքան էլ կարետոր լինի անվտանգության նախապետական մակարդակների ամրապնդումը, այն չէ այսօրվա առաջնահերթ խնդիրը:

Չգտելով դառնալ ժամանակակից աշխարհի լիիրավ անդամ, մենք պետք է մտածենք այդ աշխարհին համապատասխանելու

մասին, նրա հետ նույն լեզվով, նույն հասկացություններով խոսելու մասին: Այս տեսանկյունից մեր ամբողջ քաղաքականությունը պետք է, չափավոր մնալով ազգային հարցերում, արագ ու արդյունավետ գործի ժողովրդավարական ճանապարհին:

Սակայն հարց է ծագում. ժամանակակից ո՞ր աշխարհի լիիրավ անդամն ենք մենք ուզում դառնալ: Գուցե, ավելի ճիշտ կլինի հարցն այլ կերպ դնել. ո՞ր աշխարհի լիիրավ անդամը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետությունը:

Նախկին Խորհրդային Միության հանրապետությունները փորձում են նորից իրենց տեղը գտնել աշխարհում: Չի բացառվում, որ նրանց մեծ մասը (այդ թվում եւ Հայաստանը) այս նոր տեղը գտնի 3—րդ աշխարհում՝ զարգացող ու թերի զարգացած երկրների շարքում: Այս առումով, ինչ խոսք, մեծ կարետություն է ստանում Հայաստանի ինտելեկտուալ, նյութական, հումքային եւ էներգետիկ ներուժի գնահատումը, բայց եւ այնպես, կարծում ենք, սա չէ կարետագույնը:

Առաջնահերթը այսօրվա Հայաստանի մշակութային ներուժի հարցն է. կարծում ենք, որ միայն հստակ մշակութային կողմնորոշումը կստեղծի վաղվա Հայաստանի հաստատուն հիմքը: Առաջնությունը տալով այս խնդրի լուծմանը՝ Հայաստանը կկարողանա գտնել իր եզակի տեղը ժամանակակից քաղաքակրթության համակարգում:

Այս բոլոր հաշվարկները կարող են եւ պետք է կատարվեն միայն ապամբողջատիրականացման գործընթացին զուգահեռ, որն իր հերթին ենթադրում է անձի օտարացված իրավունքների վերականգնում եւ պետք է իրականացվի ու կառավարվի պետության կողմից՝ հիմնվելով մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքի վրա:

Նոր պայմաններում նոր խնդիրների լուծման առաջ է կանգնում նաեւ սփյուռքը, քանզի հայրենիքի կարգավիճակի հետ միասին փոխվում է նաեւ սփյուռքի կարգավիճակը.

պատմական հայրենիքում պետականություն չունեցող սփյուռքից, որը, գաղափարապես հակադրված լինելով Խորհրդային Հայաստանին, բնականաբար, չէր ընդունում այն որպես գաղափարական կենտրոն, հայ սփյուռքը վեր է ածվում պետականություն եւ ղեկավարման կենտրոն ունեցող՝ օտար երկրներում ապրող զաղութների համակարգի: Յավոք, չի բացառվում, որ այս անցումը լինի երկարատեւ, զուգորդվի ցավագին երեսյթներով, բայց եւ այնպես ընդհանուր միտումը, բխելով ներկա իրավիճակից, արդեն իսկ հստակ ուրվագիծ է ընդունել:

Միայն ճիշտ գնահատելով սեփական ուժերը, միայն առաջ նայելով եւ հստակ խնդիրներ ձեռնարկելով՝ Հայաստանի Հանրապետությունը եւ հայ սփյուռքը կկարողանան առանց կորուստների, իսկ անսխալ քայլերի դեպքում՝ նույնիսկ որոշակի նվաճումներով դուրս գալ այս չափազանց բարդ անցման շրջանից:

Հոկտեմբեր, 1991թ.

ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՐԱՆՔՆԵՐ,
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Դարձյալ նույնը. կրկնվում է Առաջին Հանրապետության կազմավորման իրավիճակը: 91-ի աշնանը կայացած նախագահական ընտրությունները ցրեցին վերջին կասկածը. ընտրվում էր անհատ, այլ ոչ թե կուսակցության առաջնորդ, փափագ, այլ ոչ թե ծրագիր, հույս, այլ ոչ թե նպատակ: Դադարեց ենթադրություն լինելուց այն, որ սայլը փոսից հանելու ցանկացողների թիվը խիստ կրճատվել է: Իրավ՝ անբանը ծրագրի կարիք չունի, իսկ քաղքենին նպատակի կարիք չունի: Ճիգ ենք անում ինչ—որ բան փոխելու, կրկնում ենք հին սխալները, ավելացնում դրանց նորերը... Իսկ սա՛յլը:

ԷՏՏՏԻՉՄ

Իր չորսհարյուրամյա զարգացման ուղին եվրոպական դեմոկրատիան (շփոթել այսպես կոչված «ժողովրդավարության» հետ) անցավ քաղաքացիական հասարակության եւ պետականամոլության (էտատիզմ) միջեւ ծավալված պայքարի դրոշի տակ: Էտատիզմի էությունն այն է, որ պետությունն, իբր, պաշտպանում է ԸՆԴՀԱՆՈՒՐ շահերը եւ հաշտեցնում հակադիր ուժերը: Այդ իսկ պատճառով կառավարման արդյունավետության գաղափարը պետականամոլները կապում են պետական ապարատի իշխանության ամրապնդման հետ, նրա վերահսկման ոլորտի ընդլայնման հետ, անգամ եթե այդ ընդլայնումը իրականացվում է դեմոկրատական եւ քաղաքացիական ձեռքբերումների սահմանափակման հաշվին: Դեմոկրատիան, որպես պետական կառավարման առանձնահատուկ մեխանիզմ, ելնում է այն ակնհայտ փաստից, որ ընտրությունների միջոցով ձեւավորված կառավարման մարմինները ներկայացնում են ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ շահերը, այսինքն՝

ՄԱՍՆԱՎՈՐ, այլ ոչ ընդհանուր շահերը: Ավելին, պետությունն ունի նաեւ սեփական շահեր, որոնք ոչ միայն չեն համընկնում, այլեւ հակադրվում են քաղաքացիական հասարակության շահերին: Այստեղ, մասնավորապես, կարելի է նշել հսկայական ֆինանսական եւ նյութական միջոցների կլանման հաշվին տեղի ունեցող՝ իշխանության ազդեցության հզորացումը: Այնպես որ, դեմոկրատիայի տեսանկյունից, պետությունը ոչ միայն մասնավոր շահեր է արտահայտում, այլեւ հանդես է գալիս իբրեւ քաղաքական պայքարի ՄԱՍՆԱԿԻ սուբյեկտ, դրանով իսկ «բացահայտվելով» որպես քաղաքացիական հասարակության սահմաններում գործող ինստիտուտներից ՄԻԱՅՆ ՄԵԿԸ:

Ընդհանուր, հանրային շահերը ներկայացված են ՕՐԵՆ-ՔՈՒՄ եւ այդ օրենքից օգտվելու հավասար իրավունքներում: Այս ՕՐԵՆՔԸ ամենից վեր է: Այն մարդու անկապտելի իրավունքների պահպանման եւ կատարման երաշխիքն է: Այն ընտրողների փոքրամասնության իրավունքների պաշտպանն է ու քաղաքացիական հասարակության ինքնաբավության պայմանը:

Քաղաքացիականության պայմաններում հասարակությունը սնում ու պահում է պետական համակարգը, պայքարում է օրենքների կատարման համար: Մեզանում, սակայն, տեղի է ունենում հակառակը. պետությունը բաշխում է կենսական բարիքները եւ ստիպում է բնակչությանը օրինապահ լինել: Էտատիզմի առավել ավարտուն ձեւը՝ տոտալիտարիզմը (ամբողջատիրություն), լինի դա ֆաշիզմ թե ռուս—ասիական կոմունիզմ, խզելով մարդկանց միջեւ եղած բնական կապերը, զավթում է այդ կապերին պատկանող տեղն ու դերը: Այսպիսով, իրենց եռանդն ու ունակությունները իրագործելու հնարավորություններից զրկված մարդիկ վերածվում են անդամալույծների, որոնց հույսն ու գոյության միակ առհավատյան դառնում է պետությունը:

Եթե Երրորդ Հանրապետությունը պետք է դառնա այն, ինչի մասին հայտարարում են նրա այսօրվա «ձեռավորողները», ապա այդպիսի պետությունը առաջին հերթին պետք է ձգտի ապահովելու մարդկանց քաղաքացիական վիճակը, երբ յուրաքանչյուր անձ դառնում է սեփական կյանքի կերտողը, երաշխիքն ու հույսը:

Քաղաքացիականությունն է, որ ժողովրդին ազգ է դարձնում, իսկ պետությունը վերածում դեմոկրատիայի՝ ազգավարության: Այլապես, ժողովուրդը շարունակում է մնալ բնակչություն, իսկ նրա անունից իրագործվող կառավարումը՝ բնակչավարություն:

ԱՐՄԱՏՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության ստեղծումը ոչ միայն պատմական նպատակ է, այլև ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր է շատ եւ շատ սերունդների համար: Սա ինքնին խոսում է նման խնդրի լուծման գերդժվարության մասին: Փորձենք պատկերացնել մի ընտանի կենդանու, որին ազատ են արձակում, ասելով. «Դե գնա,՝ գլխիդ ճարը տես»: Տասնամյակներ շարունակ մենք տնվորի կյանք ենք վարել, Սովետների կամակատարներն ենք եղել: Այդ ընթացքում մեծամասամբ կորցրել ենք որակյալ արտադրանք տալու ունակությունը, սեփական քրտինքով հանապազօրյա հացը վաստակելու շնորհքը: Մեզանից շատերը վերածվել են քաղթենիների, որոնք միայն սեփական շահն են փնտրում՝ տարված միայն սեփական ընտանիքի բարեկեցությամբ: Եվ անգամ այս խնդիրները կարող չեղանք լուծել. ստեղծեցինք, սնեցինք հասարակության առջեւ իրենց պատասխանատվությունը չգիտակցող սերունդներ, որոնց «մաքրասիրությունը» (բառիս ամենալայն իմաստով) սահմանափակվում է սեփական բնակարանով, որոնք կեղտը ոչ թե մաքրում, ոչ թե վերացնում, այլ դուրս են շարժում, չգիտակցելով, որ այնտեղ, դրսում ազգային տարածք է եւ իրենք էլ են այդ կեղտի վրայով ու միջով անցնելու: Այս սերունդը չի ընդլայնում իր տան պատերը, չի հասցնում դրանք մինչեւ

պետության սահմանները, որոնք պաշտպանության նույնքան կարիք ունեն, որքան՝ յուրաքանչյուր տուն: Ձեռավորվել է եսասիրության շրջանակներով պարփակված պետական քաղթենիների մի ստվար դասակարգ:

Արցախյան շարժման ամենաբուռն շրջանում, երբ թվում էր, թե ողջ ժողովուրդը թոթափել է կոմունիստական թմբիրը եւ պատրաստ է պաշտպանելու իր ազգային շահերը, քաղաքական տրամադրությունների ծանրաչափը գրանցել էր հետեւյալ ցուցանիշները՝

լավատեսորեն է տրամադրված -41 տոկոսը	} 59 տոկոսը
հոռետեսորեն է տրամադրված -16 տոկոսը	
մտահոգված է միայն անձնական	
կամ ընտանեկան խնդիրներով - 43 տոկոսը	

Ինչպես տեսնում ենք, բնակչության մոտ 60 տոկոսը հոգեբանորեն պատրաստ չէր արդեն իսկ սկիզբ առած արմատական վերափոխություններին. մի հանգամանք, որը մենք կապում էինք «անցյալի բեռի» կամ «անցյալի ժառանգության» հետ:

Ինչպես պարզվեց հետագայում, «բեռը» շատ ավելի ծանր էր: Գերագույն Խորհրդի ընտրությունների կապակցությամբ անցկացրած հարցումը ցույց տվեց, որ Խորհրդային Միության կազմից դուրս գալու գաղափարի կողմնակիցները կազմում էին ընտրողների ընդամենը 20 տոկոսը: Այդ քայլին դեմ էր բնակչության 60 տոկոսը, ընդ որում, որպես հիմնական փաստարկ, վերջիններս բերում էին կենսաապահովման հարցը: Նույն հարցումը ի հայտ բերեց եւս մեկ մոլորություն, որը վերաբերում է հայերին հատուկ ձեռներեցությանը. մասնավոր սեփականության կողմնակիցների թիվը կազմում էր 18 տոկոս: Այնպես որ, ըստ էության, պատմության մարտահրավերը պատրաստ էր ընդունելու յուրաքանչյուր հինգերորդը միայն:

Դարձյալ հաղթեց պետականամտությունը, որը, կարծում ենք, մեր թուլության, մեր ռազմավարական սխալների, մեր քաղա-

քական կուրության ու անհեռատեսության, մեր քաղքենական հոգեբանության ծնունդն է: Այդ նեղմությունը արդարացնելու համար մենք հորինել ենք «ավանդական» ազգային բարոյական նկարագիրը. հայերը ընտանիք սիրող, զավակ սիրող, ծնող սիրող ազգ են: Այո, բայց հիմնականում սեփական ընտանիքը, սեփական զավակին, սեփական ծնողներին:

Դա քիչ է: Ժամանակն է սիրել միմյանց, գործել միասնաբար եւ միայն անհրաժեշտության դեպքում դիմել պետության օգնությանը:

Դժբախտաբար, ինչպես ցույց տվեց նախագահական ընտրություններին նախորդող սոցիոլոգիական հարցումը, բնակչության գերակշռող մասն այսօր գտնվում է այսպես կոչված խցանման մեջ եւ առաջվա պես իր բոլոր հույսերը կապում է պետության հետ: Նույնիսկ այնտեղ, ուր մարդիկ, թվում էր, թե հնարավորություն ունեն ցուցաբերելու իրենց ինքնուրույնությունը՝ գյուղերում: Ամենուրեք նույն հառաչանքն էս լսում. մի քիչ հաց լինեք, մի քիչ կարագ, մի քիչ վառելանյութ եւ այլն, եւ այլն... Եւ դարձյալ. պետությունը թող օգնի, պե՛տք է օգնի: Զչերն են հասկացել, ընդունել ժամանակի հրամայականը ու սկսել ինքնուրույն հաղթահարել դժվարությունները, լուծել սեփական խնդիրները: Մենք դա տեսանք գյուղերում եւ ձեռնարկություններում: Բայց այսպիսիք շատ քիչ են, մեծամասնությունը նպաստում է էտատիզմի, որպես շարունակվող քաղաքական գործընթացի, պահպանմանը: Սա չափազանց վտանգավոր միտում է, որից կարող են օգտվել հետադիմական ուժերը: Համենայն դեպս, ընկերաբանները չեն բացառում սոցիալական պայթյունի հնարավորությունը:

ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Սխալված կլինենք, եթե չընդունենք, որ Երրորդ Հանրապետությունը «ձեավորողները» ձգտում են դեմոկրատական պետություն ստեղծել: Սակայն կան հարցեր, որոնք արժեք ենարկել այդ իսկ տեսանկյունից: Խոսքը, մասնավորապես,

ազգի քաղաքական նպատակների ձեակերպման մասին է:

Հայտարարելով անկախությունն ու ինքնիշխանությունը որպես առաջնային նպատակ, շարժման ղեկավարները անտեսել էին նպատակների եւ միջոցների հարաբերակցության հարցը: Այնինչ, պատմությունը հուշում է, որ անկախությունն ու ինքնիշխանությունն ավելի հաճախ եղել են ոչ թե նպատակ, այլ միջոց: Նպատակի ճիշտ ընտրությունն ու սահմանումը առանցքային հարց է ցանկացած ազգի համար:

ԱՆՊԱՏՐԱՍՏ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐԻ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Վերջ ի վերջո ամեն ինչ որոշում են կադրերը: Մեր դեպքում կադրեր, կարծես, միշտ չկան: Կան «կադրեր», որոնք «քախտի բերմամբ թե պատահմամբ» իրենց ձեռքն են վերցնում կառավարման ղեկը, չունենալով նախապես մշակված ծրագրեր, չունենալով այդ ծրագրերը կատարողներին, չունենալով ամուր հիմք ու հեռարան: Այսպես սկսվեց շարժումը Ղարաբաղում. պատրանքներ, հույսեր. «արդար պահանջները պետք է բավարարվեն», իսկ որոշումները ընդունվում էին ընթացքում, հաճախ՝ ուշացած, հաճախ՝ մինչեւ վերջ չմտածված ու թերի:

Մոտավորապես նույն ոգով էր գործում եւ «Ղարաբաղ» կոմիտեն: Գերագույն խորհրդի ընտրությունների պահին կոմիտեի անդամները, լինելով մեկուկես—երկու տարվա քաղաքական պայքարի ղեկավարներ, չունեին ոչ հստակ ծրագրեր, ոչ «ստվերային կաբինետի» կազմ: Եվ դա այն դեպքում, երբ սոցիոլոգները, հիմնվելով հարցման արդյունքների վրա, նրանց նախազգուշացրել էին սպասվող հաղթանակի մասին: Համեմատության համար կարելի է հիշել «Մայրոտիսի» գործունեությունը. դեռ նախքան իշխանության գալը, այդ կազմակերպությունը արդեն իսկ ոչ միայն ուներ սահմանադրության, տնտեսական ու ռազմական բարեփոխումների պատրաստի նախագծեր, այլեւ գիտեր իր անելիքները հնարավոր տնտեսական շրջափակման դեպքում:

Առաջին հայացքից թվում է, թե մեր սխալները բխում են միայն կադրային քաղաքականության թերություններից: Սակայն պետք է խոստովանել, որ կադրերի ընտրության ամենակատարյալ համակարգի առկայության դեպքում անգամ մեր հնարավորությունները մեծ չէին լինի: Մեկ—երկու տասնյակ բավարար մակարդակ ունեցող մարդիկ խնդիրը չեն լուծում: Մեզ անհրաժեշտ են կադրեր, որոնք կձեռավորեն նոր, ճակատագրի մարտահրավերն ընդունելուն պատրաստ սերունդ:

Իսկ առայժմ կառավարման ապարատը հիմնականում բաղկացած է մարդկանցից, որոնք դեռ չեն սթափվել էտատիզմի հիպնոսից, որոնք, գիտակցաբար ձգտելով հասնել ազգավարության, անգիտակցաբար դանդաղեցնում են այդ գործընթացը: Նրանք ենթադրում են, որ ներկայացնում են ողջ ազգի շահերը եւ պատասխանատու են նրա ճակատագրի համար: Նրանք առաջվա պես իրենց համարում են պետության շահերի պահպաններ եւ առաջվա պես հակադրում են դրանք մասնավոր շահերին: Պետականամոլություն կոչվող ճոճանակը դեռ ձոճվում է. ժողովուրդը շարունակում է ապավինել պետությանը, իսկ պետությունը չի շտապում հանձնել ժողովրդին նրա եւ իր ճակատագիրը: Ասենք, ժողովուրդն էլ առայժմ պատրաստ չէ իր վրա վերցնելու այդ բեռը, նրան նույնպես ժամանակ է պետք՝ էտատիզմից բուժվելու համար: Այսպիսով, հարց է ծագում. վաղ չէ՞ արդյոք խոսել դեմոկրատիայի մասին, գուցե, անհրաժեշտ է մի ինչ—որ միջանկյալ փուլ, որի նպատակը պետք է դառնա դեմոկրատական հասարակության ստեղծումը, եւ եթե անհրաժեշտ է, ապա ինչպիսի՞ն պետք է լինեն այդ միջանկյալ փուլի կառուցվածքային առանձնահատկությունները, որո՞նք են այն ռեսուրսներն ու արժեքները, որ պետք է կյանքի կոչվեն՝ վերոհիշյալ կառուցվածքների արդյունավետ աշխատանքը ապահովելու համար: Գիտակցվում է արդյոք այս հարցի ճիշտ պատասխանը գտնելու անհրաժեշտությունն ու կարեւորությունը: Դրվե՞լ է արդյոք այս խնդիրը քաղաքագետ-

ների, պատմաբանների, ընկերաբանների, հոգեբանների առաջ եւ ուսումնասիրվո՞ւմ է արդյոք այն վերջիններիս կողմից:

ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՓԵՐԸ

Որքան էլ հոռետես չլինեմք, որքան էլ հույսով նայենք ապագային, այնուամենայնիվ, կա մի կասկած, թե կվարձատրվի՞ արդյոք այսօրվա սերունդը իր համբերատարության, զրկանքների համար, եւ ո՞րն է այն ուղին, որ հնարավորին չափ արագ սայլը տեղից կշարժի: Հավանաբար, հարկավոր է ընտրել այն ուղին, որն առայժմ փակուղի է՝ մշակույթն ու լուսավորությունը: Սրանց օգնությամբ անհրաժեշտ է գտնել նոր հոգետր արժեքներ, որոնց հիման վրա էլ հայերի նոր սերունդներ ձեռավորել: Սերունդներ, որոնք ի վիճակի կլինեն նորագույն տեխնոլոգիաներ գործի դնել, որոնք շուկայական տնտեսության «լեզուներ» կյուրացնեն, որոնք իրենց մեր հողի տեր, մեր պետության քաղաքացիներ, մեր ազգի պաշտպաններ կզգան: Ազգի, այլ ոչ առանձին վերցրած ընտանիքի: Զմռանանք, որ ուրիշներն էլ առաջին հերթին պատրաստ են օգնելու մեզ հենց կադրեր սովորեցնելու գործում, այլ ոչ տեխնիկա ու ֆինանսներ տրամադրելու: Տեխնիկան ու ֆինանսները պետք է վստահելի ձեռքերում լինեն:

Վերադառնալով նպատակների եւ միջոցների հարաբերակցության հարցին՝ ամփոփեմք. մեր գերնպատակը պետք է լինի վաղվա Հայը, եւ մշակույթի գործն է անել այնպես, որ այսօրվա հայը ծառայի որպես այդ նպատակին հասնելու ռեսուրս եւ արժեք: Սակայն մինչ այդ հսկայական պատասխանատվությունը կրվի մշակույթի վրա, անհրաժեշտ է գտնել եւ վերադարձնել նրան այն մեխանիզմները, որոնց առկայության դեպքում է միայն հնարավոր դառնում մշակույթի ինքնավերաարտադրման պրոցեսը, այսինքն՝ մշակութային գործընթացը եւ առաջընթացը:

Հունվար, 1992թ.

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Հոգված առաջին

Մենք ապրում ենք անցումային շրջանում: Սա մի փաստ է, որը մենք, ըմբռնելով որպես մի ընդհանուր, տեսական սահմանում, այսուհանդերձ լիովին չենք գիտակցում, քանի որ այն հսկայական տեղաշարժերն ու փոփոխությունները, որ տեղի են ունենում մեր ժամանակներում, հաճախ իրենց արտահայտությունն են գտնում մեզ համար անմիջապես առօրեական մանրունքների վերածվող, առաջին հայացքից իրենց կարետությունը քրաքահայտող հանգամանքների, սովորական անցուղարձի մեջ: Նման հեղաշրջումների ողջ էությունը ըմբռնելու համար անհրաժեշտ է ժամանակային հեռացվածություն, որը թույլ է տալիս գնահատումների մեջ հուզականությունից զերծ մնալ:

Ինչ խոսք, հեշտ չէ անդրադառնալ քո անձի, քո ընտանիքի, քո անմիջական շրջապատի, քո կյանքի հետ կապված, այս բոլորի ապրելակերպը եւ ընթացքը որոշող երեւոյթներին, տալ դրանց ճշմարիտ եւ ճշգրիտ նկարագրությունը եւ անկողմնակալ վերլուծությունը: Սակայն, հիմնվելով Ղուրկհայմի այն պնդման վրա, որ «հասարակական ֆենոմենները սոսկ իրեր են», պետք է ընդունենք, որ որեւէ դիտորդ կարող է նկարագրել ցանկացած երեւոյթ, նույնիսկ եթե նա (դիտորդը) ընդգրկված է այդ երեւոյթի մեջ: Պարզապես, այդ դիտորդը պետք է իրեն դնի համակարգից դուրս գտնվող ինչ-որ մտահայեցողական դիրքում, որի կարետագույն պայմանը նկարագրվող երեւոյթից անհրաժեշտ հեռացվածության պահպանումն է: Միեւնույն ժամանակ դիտորդի մտահայեցողական դիրքավորումը պետք է հստակ հիմքեր եւ սահմաններ ունենա:

Զգտելով չխախտել նշված հեռացվածությունը, փորձենք դիտարկել այն գործընթացները, որոնք տեղի են ունենում

«անցումային» կոչվող պատմական ժամանակահատվածում: Այս բառն արդեն իսկ մատնանշում է, որ կա ազգի, հասարակության եւ պետության մի վիճակ, որն ինչ-ինչ պատճառներով ապակայունացել է, կորցրել է իր առանցքային կառուցվածքի ամրությունը, իր ներքին հավասարակշռությունը, արտաքին ազդեցություններից (այդ թվում՝ նախահարձակումից, օտար արժեքների էքսպանսիայից, լեզվամտածողության ներթափանցումից եւն) պաշտպանվելու, այսինքն՝ դրանք ետ մղելու կամ զուլելու, չափավորելու ունակությունը:

ՍԱ ԱՅՆ ՎԻՃԱԿՆ Է, ՈՐԻՅ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՆՅՈՒՄԸ:

Հասարակության ինտելեկտուալ գործունեության շնորհիվ աստիճանաբար ձեւավորվում է մի ինչ-որ ազգային իդեալ, ցանկալի ապագայի պատկեր, որը կարող է տարբեր դրսեւորումներ ստանալ. պատկերացումներն ապագայի մասին, դրանք մշակողների եւ կրողների բանավեճի շնորհիվ, կարող են՝ այս կամ այն աստիճանի մշակվածություն ձեռք բերել եւ, ի վերջո, ձեւակերպվել որպես զանազան գաղափարական, քաղաքական, տնտեսագիտական ուսմունքներ, քաղաքական կուսակցությունների եւ կազմակերպությունների ծրագրեր եւ նույնիսկ կրոնական հոսանքներ:

ՍԱ ԱՅՆ (ՅԱՆԿԱԼԻ) ՎԻՃԱԿՆ Է, ԴԵՂԻ ՈՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԻ ԱՆՅՈՒՄԸ:

Ակնհայտ է, որ ինչքան ավելի հստակ ու մանրամասն մշակված լինի «ապագան», այնքան ավելի դյուրանցանելի կդառնա դեպի այդ «ապագան» տանող ճանապարհը:

Ակնհայտ է նաեւ, որ ինչքան ավելի փոքր լինի տարբերությունը միեւնույն հասարակության ընդերքում արտադրված ծրագրերի եւ ուսմունքների միջեւ, այնքան ավելի քիչ կորուստներ կտա տվյալ հասարակությունը անցումային շրջանում, քանի որ հակադրությունը չի ստանա խոր գաղափարական բնույթ, այսինքն՝ չի տանի դեպի հասարակության անվերականգնելի

սոցիալական բաժանում եւ հակադիր սոցիալական խմբերի անգիջում պայքար: Այս պայմաններում պայքարը իշխանության համար եւ պայքարը ծրագրի համար կհամընկնեն, հիմք ստեղծելով՝ սոցիալական անխուսափելի շերտավորման եւ սահմանազատման ընթացքը հնարավորին չափ քիչ կորուստներով եւ առանց ավելորդ բարդությունների կառավարելու համար:

Հասկանալի է նաեւ, որ այն համակարգը, որն արդեն չի բավարարում, պետք է հիմնովին ուսումնասիրվի, որպեսզի բացահայտվեն նրա փլուզման հիմքում ընկած պատճառները: Նման ուսումնասիրությունը ունի զուտ կիրառական նպատակ. առանցքային գաղափարը հերքելուց հետո փտած տարրերը, համակարգի մետաստազները, անշուշտ, պետք է հնարավորին չափ արագ հեռացվեն, ոչնչացվեն, սակայն դրանց հետ մեկտեղ անգզուշորեն կարող են քանդվել նաեւ առողջ օղակները եւ կառուցվածքները, որոնք գոյություն ունեն ցանկացած պետական համակարգում: Խոսքս, իհարկե, չի վերաբերում այն կառուցվածքներին, որոնք գաղափարական եւ պատժիչ դեր են կատարել, քանի որ յուրաքանչյուր հասարակության շրջանակներում դրանց ուղղվածությունը խստորեն պայմանավորված է:^{*)} ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է ՄԱԶՐԵԼ ԵՒ ԿԱՌՈՒՅԵԼ:

Եթե այս գործողությունները կատարվում են անգիտակցաբար, եթե պարզված չէ, թե իրականում ինչը պետք է մաքրվի եւ ինչը՝ կառուցվի, անցման շրջանը ձգձգվում է, նախորդ համակարգից մնացած տարրերը, վերաձեւավորվելով, վերադասավորվելով, ընդունում են նոր տեսք, պահպանելով, սա-

^{*)} Պարզ է, որ իրավական պետություններում պատժիչ ֆունկցիաներ կատարող մարմիններն ուղղված են հանցագործների, ի վնաս հասարակությանը գործող անձանց դեմ, մինչդեռ ամբողջատիրական համակարգում համապատասխան մարմինների հիմնական թիրախը այլախոհներն են, ուստի այս ասպարեզում անհրաժեշտ է կատարել արմատական վերափոխումներ, որոնց շնորհիվ միայն հնարավոր կլինի արագացնել իրավական պետության կառուցման գործընթացը:

կայն, հին բովանդակությունը, եւ շարունակում են վարակել համակարգի բոլոր կառուցվածքները, անկախ նրանից, թե վերջիններս երբ են ստեղծվել:

Վերը շարադրած նկատառումները անհրաժեշտ էր նշել, որպեսզի հնարավոր լինի ավելի լուրջ քննարկում սկսել անցումային շրջանի էության վերաբերյալ:

Հավանաբար, նման ժամանակահատվածների ամենաբարդ խնդիրներից մեկը ազգի կամ հասարակության (եթե վերջինս արդեն ձեւավորվել է) կուտակած փորձի վերաարժեքավորումն ու վերափոխատավորումն է:

Նորացման, նորագոյացման պոթենցիալը, որը միշտ էլ հուզական է, անակնկալ է եւ, ի վերջո, հայտնություն է, որը նորից ու նորից առաջ է քաշում չարի եւ բարու գնահատման եւ արժեքավորման խնդիրները, որը դեռ երեկ սովորական, բնական թվացող արժեքները հայտարարում է կեղծ, զրկելով աջօրեությունն իր հաստատուն իմաստից, քայքայում է. նույն այդ պոթենցիան հիմք հանդիսացող «ողնաշարային» գաղափարական առանցքը, որի շուրջ նախորդ ժամանակաշրջանի ընթացքում տեղի էր ունենում փորձի եւ իմացության ընտրությունն ու կուտակումը:

Թերեւս, այս երեւոյթը կարելի է համեմատել ուլունքաշարի հետ. երբ կտրվում է վզնոցի թելը, ուլունքահատիկները, որոնք լիարժեք իմաստ ունեին միայն վզնոցի շարանում, միասնաբար, ընդհանուր առանցքի վրա, թափվում, ցրվում եւ կորցնում են իրենց արժեքը: Վերափոխատավորվել դրանք կարող են միայն նոր վզնոցի շարանում, բայց դա կլինի արդեն նոր իմաստ: Իսկ կորցնելով առանցքը, պիտի իրենք էլ կորչեն, վերանան: Փորձն ու իմացությունը, որոնք արտահայտվում են տեքստի^{*)} ձեւով ու միջոցով, յուրաքանչյուր պատմական դարաշրջանում կոչված են հիմնավորելու տվյալ ժամանակի եւ հասարակու-

^{*)} Տվյալ դեպքում «տեքստ» եզրը օգտագործվում է բառի լայն՝ նշանագիտական (սեմիոտիկ) իմաստով:

թյան համար կարետրագույն արժեքները:

Ղեռք է, սակայն, նշել, որ հին արժեքները վերջնականորեն չեն կորչում. նրանք պահպանվում են մշակութային ոլորտում, ազգի հիշողության մեջ (հիմնականում ժողովրդական բանահյուսության միջոցով), հաճախ նաեւ արգելված կուսակցությունների եւ կազմակերպությունների գործունեության շնորհիվ: Սա է պատճառը, որ անցումային ժամանակաշրջանում, երբ մերժվում է հինը, անմիջապես առաջին պլան են մղվում արգելքի տակ եղած, բայց այս կամ այլ կերպ պահպանված այն արժեքները, որոնք ապացուցել են իրենց կենսունակությունը, իրենց մերժողական կամ կենսարար ներուժը: Հիշենք 1988-ի Հայաստանը. Երեսնի Ազատության հրապարակում առաջին իսկ օրերից հնչեցին այն երգերը, որոնց համար 30-ականներին Սիբիր էին աքսորում, առաջին իսկ ամիսներին տարածվեցին ու յուրացվեցին 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայ ազգային գործիչների գաղափարներն ու մտքերը... Բացասման բացասման օրենք:

Սակայն, ըստ դիալեկտիկայի նույն այդ օրենքի, վերածնված, վերագտնված արժեքները պետք է արտահայտվեն մի նոր, ավելի բարձր մակարդակի վրա: ՍԱ Է ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ:

Նորովի իմաստավորված փորձը եւ արժեքները միայն այն դեպքում են դառնում գործուն ու կենսունակ, երբ, ուլունքի նման շարվելով նորագույնացման հիմնական առանցքի վրա, գտնում են իրենց ձիշտ տեղն ու դերը: Իսկ այդ շարանից դուրս մնացած արժեքները դարձյալ մղվում են հետին պլան՝ այսպես կոչված «երկարատեւ հիշողության» մեջ:

Վերը արդեն նշվեց, որ հասարակությունը իր տարբեր ուժերի, խմբերի միջոցով ձեւավորում է «ապագայի» տարբեր պատկերներ: Դրանք մշակվում են ձեւի եւ բովանդակության հարթություններում, այն է՝ ըստ ձեւի. ինչպիսի՞ն պետք է լինի մարդկանց տվյալ միավորման կազմակերպական կառուցված-

քը, եւ ըստ բովանդակության. ի՞նչ իմաստ պետք է արտահայտի, այլեւ ի՞նչ հիմքերի վրա պետք է հենվի նման կառուցվածքային միասնությունը:

Այժմ անդրադառնանք ձեւի հարթությանը վերաբերող այն կառուցվածքին, որն առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում հենց անցումային շրջանի համար:

Իր պատմության ընթացքում մարդկությունը, ըստ էության, առաջարկել է պետական կառուցվածքի երկու հիմնական տեսակ՝ միապետություն եւ հանրապետություն: Սրանք ունեն բազմաթիվ տարատեսակներ եւ սահմանագծվում են, մի կողմից, արեւելյան բռնապետությամբ, մյուս կողմից՝ պառլամենտական ժողովրդավարությամբ:

Համարվում է, որ առաջին դեպքում արեւելյան տիրակալի իշխանությունը չի ձանաչում ոչ մի սահմանափակում, մինչդեռ հանրապետության գերագույն իշխանությունը սահմանափակվում է օրենքներով եւ ընտրված ներկայացուցչական իշխանությամբ: Իրականում բռնապետը նույնպես ազատ չէ իր գործողությունների եւ որոշումների մեջ. նրան որոշակի սահմաններում են պահում խստորեն պահպանվող ավանդությունները եւ սովորությունները, նրա իշխանությունը հստակորեն կանոնակարգված է:

20—րդ դարը ավեց այս օրինաչափությունների խախտման բացառիկ օրինակներ: Այսպես, հանրապետական կառույցների առկայության պայմաններում համակարգի տոտալիտար էությունը վերածեց նացիստական Գերմանիան եւ համայնավարական Խորհրդային Միությունը ամբողջատիրական բռնապետությունների:*) Երկու դեպքում էլ համակարգերի հիմնադիրներն

*) Բերված օրինակների միջև, այնուհանդերձ, զգալի տարբերություն կա. Գերմանիայում մասնավոր սեփականությունը պահպանվել էր, մինչդեռ Խորհրդային Միությունում տեղի էր ունեցել մարդու իրավունքների լիակատար օտարացում: Այսպիսով, կարելի է ասել, որ ամբողջատիրական համակարգի «խորհրդային» տարբերակը ավելի «կատարյալ» էր, քան «նացիոնալ—սոցիալիստականը»:

արեցին ամեն ինչ, որպեսզի գոյություն ունեցող ավանդություններն ու սովորությունները մերժվեն, որակավորվեն որպես վնասակար եւ դրանով իսկ կտրվի ժամանակների, սերունդների միջեւ եղած բնական կապը:

ԱԶԳԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՈՂԸ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՈՂԸ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է:

Սա է պատճառը, որ թե խորհրդային ղեկավարները, թե նացիոնալ-սոցիալիստները ջանք ու եռանդ չխնայեցին մտավորականությանը ջնջելու, ոչնչացնելու համար: Նպատակը մեկն էր. վերացնելով բոլոր արգելքները, անսահմանափակ իշխանություն ձեռք բերել:

Սա չափազանց մեծ վտանգ է, որը բնորոշ է անցումային շրջանների համար: Ուստի անհրաժեշտ է վերականգնել ժամանակների կապը, չժխտել եւ չմերժել այն ամենը, ինչ եղել ու արվել է նախորդ ժամանակներում:

Ինչպես տեսանք, պետության ձեւը երբեմն չի համապատասխանում նրա բովանդակությանը. մի հանգամանք, որը եւ դառնում է պետական ինստիտուտների եւ կառուցվածքների քայքայման հիմնական պատճառը: Այլ կերպ ասած, պետության ձեւը պետք է համապատասխանի արժեքային նոր համակարգին: **ՍԱ Է ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ:**

Անցումային շրջանը պետք է պատասխանի դրված հարցերին եւ, այդ պատասխանների հիման վրա, ձեւավորի պետականություն՝ իր պետական համակարգով եւ կառուցվածքներով: Այս տեսակետից մեզանում, կարծես թե, լուրջ տարաձայնություններ չկան. հրաժարվելով «զարգացած սոցիալիզմի» ճանապարհից, Հայաստանի ժողովուրդը առանց հապաղելու ընտրեց դեպի ժողովրդավարական պետություն տանող ճանապարհը, որոշ տատանումներից հետո կանգ առավ նախագահական համակարգի տարբերակի վրա, առաջին անվտանգ քայլերը արեց

ազատ տնտեսական հարաբերություններին ընդառաջ:

Կառավարման պետական համակարգի ստեղծումը եւ հին կառուցվածքների քայքայումը համաչափորեն չեն ընթանում: Հեղափոխական շրջաններին հատուկ անհաշտելիությամբ նոր իշխանությունները շտապում են քանդել այն ամենը, ինչ կապված է «հին աշխարհի» հետ: Եվ միայն գիտակցելով իշխանության պատասխանատվությունը, իշխանության իրականացման մեխանիզմները ստեղծելու անհրաժեշտությունը, «նորերը» անցնում են կառուցողական գործունեության, փորձելով վերականգնել այն, ինչը դեռ հնարավոր է վերականգնել, եւ ձեւավորելով նոր պայմաններին համապատասխանող կառուցվածքներ:

Նման պարագայում կարեւորագույն դեր է ձեռք բերում ժամանակի գործոնը. խափանված կենսագործունեությունը, սովորական դարձած կենսամակարդակի անխուսափելի վատթարացումը կարող են մղել ժողովրդին կտրուկ, ծայրահեղ միջոցների, որոնք, բնականաբար, չեն լավացնի վիճակը, քանի որ հին մեխանիզմներն ու կառուցվածքները արդեն քանդվել են, իսկ նորերը միեւնույն է պետք է ստեղծվեն: Ժամանակի գործոնն է, որ, դամոկլյան սրի նման կախված իշխանությունների գլխին, ստիպում է նրանց հնարավորին չափ արագ ձեւավորել ժամանակի պահանջները բավարարող պետական կառուցվածքներ: Ակնհայտ է, որ պետական շինարարությունը ապահովելու համար անհրաժեշտ է ուժեղ իշխանություն, սակայն անցումային շրջանի հասարակությանը ժամանակ է պետք նորարձակ դեմոկրատական կարգախոսները յուրացնելու, իմաստավորելու համար, ժողովրդավարությունը անիշխանությունից զատող սահմանը որոշելու համար: Զարմանալի չէ, որ նման պայմաններում իշխանության ամրապնդմանը ուղղված բոլոր այն գործողությունները, որոնք չեն բխում արդեն ընդունված օրենքներից, անցումային ժամանակաշրջանում ձեւավորվող հասարակության կողմից ընկալվում են որպես

դիկտատուրայի հաստատման փորձեր:

Հայաստանում անցումային շրջանի բնական դժվարություններին, որոնք հաջողությամբ հաղթահարվել են աշխարհի այլ երկրներում, գումարվում են շատ ավելի դժվարահաղթ բարդություններ՝ կապված նախկին խորհրդային կայսրության հիմքում ընկած, սակայն ամբողջատիրական համակարգի պայմաններում տարբեր միջոցներով զսպվող հակասությունների հետ: Սա առանձին հարց է, որը քննարկվել է ղեռ քննարկվելու է: Խոսքս առաջին բնական դժվարությունների մասին է, որոնք կարող են հաղթահարվել «ներսից» եւ պետք է հաղթահարվեն առաջին հերթին:

Բանն այն է, որ համակարգված ու նպատակամղված աշխատանքի ոլորտից դուրս է մնացել կարետրագույն գործընթացը՝ արժեքների համակարգի վերագնահատումը եւ ընդհանուր, բնական, ժողովրդի էությունից, նրա պատմական հիշողությունից եւ փորձից բխող պարզ «ողնաշարային» գաղափարի հիման վրա նոր, վերաիմաստավորված արժեքների ձեւավորումը: Մինչդեռ, այս աշխատանքը պետք է խրախուսվի եւ օժանդակվի:

Ազգային գիտակցությունը ունի որոշակի առանցք, որը նույնն է բոլոր կուսակցությունների, կազմակերպությունների, կրոնական ուղղությունների եւ աղանդների ներկայացուցիչների համար: Սա ակնհայտ փաստ է, որը չի գնահատվում որպես կարետրագույն երեւոյթ եւ չի քարոզվում որպես այդպիսին:

Ես մարդ եմ: Ես գիտակցում եմ ինձ որպես մարդ արարած, որովհետեւ վերագրում եմ ինձ մարդկության ցեղի բոլոր այլ ներկայացուցիչների հատկանիշները: Սակայն Աստված շնորհել է ինձ նույնացվելու եւս մեկ հնարավորություն՝ իմ ազգությունը: Ես հայ եմ: Դա պատահական չէ ճիշտ այնպես, ինչպես այն, որ ես տղամարդ եմ, որ ծնվել եմ որոշակի ընտանիքում, որոշակի միջավայրում: Ես հայ եմ, եւ դա ունի իր պարզ ինքնանպատակն ու արժեքը, քանզի, հայ լինելով, ժառանգորդն

եմ իմ ժողովրդի պատմության, մշակույթի, ճակատագրի, այսինքն՝ այն հերթական միջանկյալ օղակը, որի շնորհիվ ապահովվում է սերունդների կապը: Այդ շղթան շարունակվելու է, շղթայի յուրաքանչյուր օղակ ունենալու է իր առանձնահատկությունները (սեռ, բնավորություն, մասնագիտություն, հետաքրքրություններ, քաղաքական տեսակետներ եւ այլն, եւ այլն), եւ միակ անփոփոխ մեծությունը, որի շնորհիվ շղթան ամուր է մնալու, ազգային ինքնագիտակցությունն է:

Սա է այն պարզ եւ բնական գաղափարը, որը միավորում է մեզ եւ դառնում ուժի ու եռանդի աղբյուր, եթե հստակորեն գիտակցվում է որպես կանոնակարգող արժեք: Եթե սա տեղի է ունենում, ապա գիտակցվում է նաեւ ազգի եւ հասարակության միջեւ եղած տարբերությունը եւ, ըստ այդմ, ազգի եւ հասարակության առջեւ կանգնած խնդիրների տարբերությունը: Ազգը պետք է ձգտի ձեւավորել եւ պաշտպանել իր շահերը պետության սահմաններից դուրս՝ արտաքին աշխարհում:*) Հասարակության խնդիրն այլ է. կառուցել պետություն, հսկել, որպեսզի վերջինս աշխատի որպես հստակ եւ համաչափ համակարգ, թույլ չտա հասարակության այս կամ այն խմբին գերակա դիրք գրավել: Հասարակությունը նաեւ պետք է ձեւավորի համազգային խնդիրները եւ պարտադրի պետությանը իրականացնել դրանք արտաքին աշխարհում:

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՎԵՐՈՇԻՇՅԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՃՇԳՐՏՈՒՄՆ Է:

Վերը նշված գործընթացները պետք է կառավարվեն:

Անշուշտ, նշածս խնդիրները ի վերջո կարող են լուծվել նաեւ ինքնընտրիչորեն, սակայն, նախ, պարզ չէ, թե գիտակցակա-

*) Պարզ է, որ խոսքը վերաբերում է միայն ազգաբնակչության մեծամասնությունը կազմող ազգերին, քանի որ ազգային փոքրամասնությունները իրենց էթնիկական պաշտպանության հարցերը պետք է լուծեն հենց պետության ներսում:

նության ինչպիսի մակարդակ կձեւավորվի նման տարերային պրոցեսի դեպքում եւ, վերջապես, հասկանալի է, որ չկառավարվող գործընթացը կտա ժամանակի եւ հնարավորությունների հսկայական կորուստ: Պարզ է նաեւ, որ այս գործով չի կարող զբաղվել որեւէ կառավարող մարմին, սակայն պետք է լինի ազգային գաղափարախոսության, ազգային մշակույթի, ազգագրության խնդիրներով զբաղվող մարդկանց եւ կազմակերպությունների ջանքերը համադրող, նրանց գործունեությանը օժանդակող հատուկ պետական մարմին:

Հայաստանի Հանրապետության ապագա սահմանադրության մեջ պետք է շեշտվի ազգի եւ պետության, ազգի եւ հասարակության շահերի ընդհանրությունը: Որպեսզի այդ ընդհանրությունը իրական հիմք ունենա, պետք է արմատավորվի վերոհիշյալ «ողնաշարային», առանցքային գաղափարը, որի շուրջը միայն կարող է ձեւավորվել հայ ազգի արժեքների համակարգը, ուր կարեւորագույն տեղը պետք է գրավի հայոց, որպես արժեք գիտակցվող, պետականությունը:

Նոր պայմաններում նորովի պետք է դիտարկվեն «հայրենիք—սփյուռք» հարաբերությունները, եւ հենց այստեղ է, որ ազգայինը հստակորեն առաջնային է հասարակականի նկատմամբ: Այդ խնդիրները կքննարկվեն անցումային շրջանին նվիրված մեր երկրորդ հոդվածում:

The articles of this issue of the Bulletin deal with questions relating to government and state systems, which is the overall task of Program 2 of the HAYK Institute.

In the Introduction, which consists of two parts, the necessity to create an appropriate structure for all—Armenian national government is substantiated. Such a structure, as it were, should be able to meet the requirements of the ongoing process and solve the most crucial issues facing the Armenian nation. The criteria which are to safeguard the efficiency of the structure, bringing it to further perfection, are specified and the most pressing issues relevant to the creation of the structure of all—Armenian national government are pointed out.

In part 2 of the Introduction, the draft program of the system and structure of all—Armenian national government is presented. For the implementation of the program in the shortest possible time, it will be necessary to conduct a great amount of professional research, statistical expertise work, as well as seminars and other such kind of discussions.

DAVID HOVHANNISSIAN. The Levels of Ethnic Security and its Structural Characteristics.

In his estimation of the current state of affairs as well as of the development of the Armenia—Armenians structure, the author of the article, drawing upon the security of the nation as a preliminary to its survival, points out the main characteristics structuring the security of an ethnic group on five pre—state and one state level. The security of the Armenian nation as an ethnic group can be ensured if, apart from using its intellectual, material, energetic and other resources, it would primarily resort to the cultural domain to secure its unique place in the system of modern civilization through reappreciating the existing national values. This important step, according to the author, should be taken on the transitory level from the pre—state level of security to the state level of security.

AHARON ADIBEKIAN. The Third Republic: Illusions and Visions.

The author of the article examines the social, political and economic components structuring the current state of affairs in the Republic of Armenia and aims at locating the roots of those components. His conclusion is that, in the absence of civic responsibility, democracy is doomed to remain mere illusion: the government will succeed in being leaders of people, population, instead of being leaders of a nation. The creation of a civic society is a task bearing strategical as well as historical significance and can be conceivable provided the people of Armenia get rid of etatism, alias, the psychology of an irresponsible lodger. The author locates the solution to the problem in developing integrated national culture, education, enlightenment, in general.

He is convinced that the development of the citizen of Armenian nationality should be the main goal of the present generation as well as the main means of achieving that goal.

DAVID HOVHANNISSIAN. Transitory Period: Article 1

This article deals with a certain historical—social period called transitory period. After a brief examination of different components structuring the transitory period, viz. the period lying between the starting point of transition and the acme of its development, the author makes emphasis on the content of the transitory period, that being purification and construction. According to the author, the innovation process, while being the prime mover of the transitory period, at the same time disintegrates its foundation, the 'spinal' ideological axis; therefore the most creative issue is the expression of revived, relocated values on a new, higher level. In terms of government it is vital that the form of state system be in accord with the new system of values.